ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ինչու Քրիստոս աշխարհ եկավ» թեմայով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը ներկայացնում է «Բարսեղ Կեսարացու կյանքն ու գործունեությունը» թեման:

*
* *

Փետրվարի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ծով մեղաց իմոց զիս ալեկոծէ, որ ես նաւապետ բարի, շնորհեա ինձ նաւահանգիստ Հայր ամենակալ» (ապաշխարության շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Մայր տաճարում տեղի է ունենում «Տեառնընդառաջ»-ի նախատոնակի ժամերգություն՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Նույն օրը տեղի ունեցավ նաև «Տեառնընդառաջ»-ի ավանդական խարույկի բոցավառում ճեմարանի մարզադաշտում:

*
* *

Փետրվարի 14-ին, հինգշաբթի.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Անանիա վրդ. Արաքաջյանը ներկայացնում է «Բ տիեզերական ժողովը Կ. Պոլսում» թեման:

*
* *

Փետրվարի 16-ին, ուրբաթ,—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Փարիզի հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանը և Արևմտյան Գերմանիայի հոգևոր հովիվ Տ. Հակոբ աբդ. Գալշնճյանը:

*
* *

Փետրվարի 17-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակված Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Մեծի Պահոց» խորհրդի մասին հոգեվից քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 18-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները չորսօրյա ձմեռային հանգստի են մեկնում Ծաղկաձոր:

*
* *

Փետրվարի 24-ին, կիրակի.—Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր ուստի առար, զի հող էիր և ի հող դարձցիս» (Ծննդ. Գ 19) բնաբանով քարոզ է խոսում Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում ասմունքի երեկո: Երեկոյին հրավիրված էր տաղանդավոր դերասանուհի Մետաքսյա Սիմոնյանը, որը և հանդես եկավ Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Ալիսիա Կիրակոսյանի մի

[illegible]

շարք բանաստեղծությունների արտասանությամբ:

Ամփոփի երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 29-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Փարիզի հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանը, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, մեկնում է իր պաշտոնատեղին:

*
* *

Մարտի 2-ին, կիրակի.—Գ կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արարաջյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քոյ» բնաբանով քարոզ է խոսում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Հակոբ վրդ. Գրլրենճյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 3-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի Պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ուսնձայարանի տեսուչ Տ. Շահե արքեպ. Անեմյանը:

*
* *

Մարտի 4-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբան սարկավագները չորսօրյա ձմեռային հանգստի մեկնեցին Ծաղկաձոր:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Երևանի հայրապետական վիլլայում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Սույն նիստին ներկա էր նաև Տ. Շահե արքեպ. Անեմյանը:

Վեհափառ Հայրապետի հրավերով, որպես Գերագույն հոգևոր խորհրդի նոր անդամներ, ժողովին ներկա էին նաև հանրապետության ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը և բանաստեղծ-պատմաբան Հայկ Մելքոնյանը:

Ատենի ժողովը Վեհափառ Հայրապետը ողջունեց և շնորհավորեց ներկայությունը Գերագույն հոգևոր խորհրդի երկու նոր անդամների և մաղթեց նրանց հաջողություններ՝ իրենց գործունեության մեջ:

Այնուհետև Գր. Խանջյանը և Հ. Մելքոնյանը իրենց պատասխան խոսքերում շնորհակալություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ իրենց անձի նկատմամբ ցուցաբերած վստահության համար:

*
* *

Մարտի 9-ին, կիրակի.—Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսի).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ» (Ղուկ. ԺԶ. 8) բնաբանով քարոզ է խոսում Տ. Մասիս վրդ. Գալբատյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Արսեն եպս. Բերբերյանը ներկայացնում է «Եփեսոսի Գ Տիեզերական ժողովը» թեման:

*
* *

Մարտի 16-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը: «Հայր մեր»-ից առաջ «Երանեալ են անքիծք ի ճանապարհի և ոչք գնան յօրէնս Տեառն» (Սաղմ. ՃԺԲ) բնաբանով քարոզ է խոսում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Մարտի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյանը ներկայացնում է «Քաղկեդոնի Տիեզերական ժողովը» թեման:

*
* *

Մարտի 22-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն.

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

*
* *

Նույն օրը, պատարագից հետո, հոգևոր ճեմարանի ուսանողները ուխտի են մեկնում Խորվիրապի վանք:

*
* *

Մարտի 23-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Որ զխորհուրդ քո գալստեանդ» բնաբանով քարոզ է խոսում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Արսեն եպս. Բերբերյանը ներկայացնում է «Քաղկեդոնի ժողովից հետո ընդհանուր Եկեղեցու ծոցում առաջացած ընդվզումները և Հայ Եկեղեցու դիրքը Քաղկեդոնի ժողովի հանդեպ» թեման:

*
* *

Մարտի 30-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այսօր, օրվա մեծ տոնի առիթով, Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին. Ովսաննա բարձրելոյն, օրհնեալ որ գայդ յանուն Տեառն. Օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ Հօր մերոյ Դաւթի, խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս» (Մարկ. ԺԱ 9—10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է «Դոնքացէք»-ի ավանդական հանդիսությունը: